



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-16099**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2017 թվականի հունվարի 16-ի թիվ 2-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/2-Ա**

**ՓԱՏՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարգսյանի,  
Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,  
Քննության առնելով փաստաբան Արմեն Սիմոնյանին (արտոնագիր թիվ 56) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ-ին Պալատի նախագահի առաջին տեղակալին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Արմեն Սիմոնյանը (արտոնագիր թիվ 56) 2015թ. մայիսից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 254-Ա/ԿԳ-16099 որոշմամբ փաստաբան Արմեն Սիմոնյանի (արտոնագիր թիվ 56) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16099):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունվարի 16-ին ժամը 18:32-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Փաստաբան Արմեն Սիմոնյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 1) Փաստաբան Արմեն Սիմոնյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.03.1999թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.10.2016թ. տրամադրված տեղեկանքով),
- 2) Փաստաբան Արմեն Սիմոնյանն ունի 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2015թ. մայիսից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. Պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),
- 3) փաստաբան Արմեն Սիմոնյանը 2015թ. մայիսից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. տրամադրված տեղեկանքով):

### **5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արմեն Սիմոնյանի (արտոնագիր թիվ 56, ստացած 19.03.1999թ.) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել են կարգապահական վարույթներ (ավարտված վարույթներ), որոնք կարճվել են:

### **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն*

*Սիմոնյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պարճառաբանությամբ.*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի **(Նոր խմբագրությամբ)**» (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Կարգի 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել:»:

Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշյալ կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- ✓ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ և
- ✓ մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Սույն դեպքում համաձայն 16.01.2017թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի տեղեկանքի Արմեն Սիմոնյանը 16.01.2017 թվականի դրությամբ, իր անդամավճարի պարտքը մարել է:

ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.10.2016թ-ի տեղեկանքից հետևում է, որ փաստաբան Արմեն Սիմոնյանի նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետով, Պալատի խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

**1. Փաստաբան Արմեն Սիմոնյանի (արտոնագիր թիվ 56) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:**

**2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Սիմոնյանին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Մարտուն Փանոսյան